նելոյ և նորոգելոյ զբաժին տեղիս 'ի տաճարին Ս. Յարութեան, զի որպէս Տէրութիւնն յայնժամ Յունաց շնորհեաց զՏրաման նորոգութեան, գուցէ և այժմ շնորհեսցէ Հայոց Ջանիւք Ազգապետաց, զի կարի նեղեալ էին 'ի բռնութենէ Յունաց, առաւել 'ի տուգանաց, զի անմարթ էր բեւեռ ինչ հարկանել 'ի տեղի ուրեք. որպէս խորտակեցին ըզմարմարիոն քարն զոր եդին 'ի տեղի Ուժամբոման Սուրբ Աստուածածնի 'ի յիշատակ 36 անձանց ծովամոյն եղելոց, (1832. 'ի 23 Օգոստոսի)։ Իպրահիմ Փաշա որդի Մեհէմմէտ Ալեայ Փոխարքային Եգիպտոսի պաշարեաց զքաղաքն Աքքէ և ետ պատերազմ ընդ Ապտուլլահ Փաշայի, եւ առեալ զքաղաքն եհաս մինչեւ 'ի կողմանս Կուտինայի։

Իսկ Զաքարիա վարդապետ եկեալ յերուսաղէմ կարգեցաւ Փոխանորդ Աթոռոյն։

Գաբրիէլ Պատրիարք Երուսաղէմի որ նստէր տակաւին 'ի Զմիւռնի քաղաք, գրեաց առանձին 'ի Կոստանդինուպոլիս առ Յարութիւն Ամիրայ Պէշճեան, խնդրելով 'ի նմանէ դարձուցանել զինքն յԵրուսաղէմ յԱթոռն, այլ նա խորհրդաբար արար նմա պատասխանի թէ՝ անօրէնութիւն այդպիսի գործոց անկանի Պատրիարքին և ընդ հանուր ժողովոյ ազգին, և չէր օրէն անձամբ անձին անօրինել զայդպիսի խնդիր առանց գիտութեան և հաւանութեան նոցին. ուստի պատուիրէ նմա գրել զերիս գիրս, որպէս գրեալ էր առ նա ծածկաբար, առ Պատրիարքն, առ ժողովս Ամիրայից և առ նոյն ինքն Ճանիկ Ամիրայ, բացայայտ ծանուցանելով 'ի նոսին զխնդիր ճանապարհորդելոյ իւրոյ յԵրուսաղէմ, ոչինչ յիշատակելով զառաջին նամակէն. յայնժամ և մեք ասէ ջանացուք ըստ բարեխորհուրդ կամաց նոցին անօրինել զբարին 'ի մխիթարութիւն եւ 'ի սփոփանս ծերութեան ձերոյ։

Ուղեւորեցան 'ի Ս. Էջմիածին Զաքարիա եւ Աբրահամ վարդապետք 'ի ձեռնադրել Եպիսկոպոս, և 'ի ճանապարհի պատահեցաւ Աբրահամու հիւանդութիւն կաթուածոյ, յորմէ ծանրացաւ լեզու նորա և խօսէր կապկապելով, և ոչ կարէր համարձակ շարժել զաջ ձեռն իւր. իբրեւ հասին յէջմիածին, Յովհաննէս կաթուղիկոս Կարբեցի, որ նստաւ յԱթոռ Հայրապետութեան Հայոց (1831), առաքեաց զնա